ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվականի N 814-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1106-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի «Ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը գերազանցող կամ երկու և ավելի կցորդների հետ միասին ավտոգնացքի կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները և չմասնատվող բեռներ փոխադրող թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու տրամադրման թույլտվության կարգը, տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը, ինչպես նաև մեծ եզրաչափերի առավելագույն չափերը հաստատելու մասին թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1106-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 12-րդ ենթակետի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցով բեռ փոխադրելու իրավունք վերապահող փաստաթուղթ (Ձև N 2), կամ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով թույլատրելի ընդհանուր զանգվածը և (կամ) մեկ սռնու վրա ընկնող թույլատրելի բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ տրանսպորտային միջոցով չմասնատվող բեռ փոխադրելու իրավունք վերապահող փաստաթուղթ (Ձև N 3)» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռ փոխադրելու իրավունք վերապահող փաստաթուղթ» բառերով,

բ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռների փոխադրումների իրականացման թույլտվությունները տրամադրվում են տրանսպորտի ոլորտի թվային ծառայությունների հարթակի (transport.e-gov.am) միջոցով՝ էլեկտրոնային տարբերակով: Հարթակի մուտքն ապահովվում է «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի 572-Ն որոշման համաձայն:»,

գ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռների փոխադրումների իրականացման թույլտվություն ստանալու համար բեռնափոխադրողները տրանսպորտի ոլորտի թվային ծառայությունների հարթակում (transport.e-gov.am) էլեկտրոնային եղանակով ներկայացնում են դիմում՝ ներառելով հետևյալ տվյալները՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ բեռնափոխադրողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, հեռախոսահամարը և գրանցման հասցեն.

2) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ բեռնափոխադրողի անվանումը, հարկային մարմնում գրանցման համարը (ՀՎՀՀ), հասցեն և կազմակերպության տնօրեն չհանդիսանալու դեպքում՝ կցված լիազորագիր.

3) փոխադրման տեսակը (միջպետական, միջմարզային, ներմարզային).

4) թույլտվության տեսակը (մեկանգամյա, բազմակի).

5) բազմակի (որոշակի ժամկետով) թույլտվության տեսակի դեպքում՝ երթերի քանակը.

6) երթևեկության սկզբնակետը, վերջնակետը և երթուղին.

7) բեռնափոխադրման ժամանակահատվածը.

8) բեռը փոխադրող տրանսպորտային միջոցի (քարշակի) մակնիշը/մոդելը և հաշվառման համարանիշը և կցորդի (կցորդների) քանակը, մակնիշը (մակնիշները) /մոդելը (մոդելները) և հաշվառման համարանիշը (համարանիշները).

9) ավտոգնացքի հարաչափերը (ընդհանուր զանգվածը՝ բեռով և քարշակի զանգվածը) և բեռի տեսակը, եզրաչափերը և զանգվածը.

10) սռնիների միջև հեռավորությունը և սռնիների բեռնվածությունը.

11) ավտոգնացքի եզրաչափերը (երկարությունը, լայնությունը, բարձրությունը, շրջադարձի շառավիղը՝ բեռով).

12) բեռն ուղեկցող անձի կամ անձանց անունը, ազգանունը.

13) սույն կանոնների 21-րդ կետի կիրառման դեպքում՝ պաշտպանական տրանսպորտային միջոցի մակնիշը, մոդելը, հաշվառման համարանիշը.

14) դիմումատուի կողմից հավաստիացում առ այն, որ տրանսպորտային միջոցը զննվել է բեռնափոխադրողի ներկայացուցչի կողմից և համապատասխանում է տրանսպորտային միջոցների տեխնիկական հագեցվածությանը սույն կարգով ներկայացվող պահանջներին.

15) դիմումը ներկայացնելու ընթացքում՝ էլեկտրոնային եղանակով բեռնափոխադրումների համար սահմանված պետական տուրքի վճարումը՝ սույն հարթակին ինտեգրված պետական վճարումների էլեկտրոնային համակարգի (e-payments) միջոցով։»,

դ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Բեռնափոխադրողներին էլեկտրոնային եղանակով տրամադրվում է մեկանգամյա կամ բազմակի (որոշակի ժամկետով) փոխադրումներ իրականացնելու թույլտվություն՝ համաձայն N 2 ձևի: Մեկանգամյա թույլտվությունը տրվում է նշված ժամկետում մեկ փոխադրում իրականացնելու համար: Որոշակի ժամկետով թույլտվությունը տրվում է

1-3 ամիս ժամկետով կամ նշված ժամանակահատվածում (մինչև 3 ամիս) որոշակի թվով փոխադրումներ իրականացնելու համար:»,

ե. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռների փոխադրման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված դիմումների հիման վրա ինքնաշխատ եղանակով ձևավորվում է էլեկտրոնային գրանցամատյան, որը պարունակում է N 4 ձևում արձանագրված տեղեկատվությունը: Թույլտվության տրամադրումը համակարգող պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է յուրաքանչյուր դիմումում ներկայացված տվյալների ամբողջականությունը, ինչպես նաև քարշակի և կցորդի (կցորդների) տեխնիկական համապատասխանությունը՝ տվյալ փոխադրումն իրականացնելու համար՝ ըստ դիմումում նշված տվյալների:»,

զ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. Ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռների փոխադրման թույլտվության տրամադրման մասին դիմումները քննարկվում են բեռնափոխադրողի կողմից տրանսպորտի ոլորտի թվային ծառայությունների հարթակում (transport.e-gov.am) էլեկտրոնային տարբերակով սույն կանոնների 5-րդ կետով սահմանված ամբողջական տեղեկատվությունը ներկայացնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:»,

է. 11-րդ կետի «3» թիվը փոխարինել «2» թվով,

ը. 12-րդ կետի «կետի 1-ին և 2-րդ ենթակետերով» բառերը փոխարինել «կետով» բառով,

թ. 13-րդ կետի 1-ին ենթակետի «փաստաթղթերը թերի են» բառերը փոխարինել «տեղեկատվությունը թերի է» բառերով, իսկ «3» թիվը՝ «2» թվով,

ժ. 13-րդ կետից հանել 5-րդ ենթակետը,

ժա. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. Թույլտվությունը բեռնափոխադրողին տրամադրվում է էլեկտրոնային եղանակով՝ այն հասանելի դարձնելով տրանսպորտի ոլորտի թվային ծառայությունների transport.e-gov.am հարթակում՝ դիմորդի անձնական էջում և ուղարկվում է նրա էլեկտրոնային փոստի հասցեին:»,

ժբ. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15. Լիազոր մարմինը բեռի փոխադրման ընթացքում երթևեկության անվտանգության պայմաններն ապահովելու նպատակով բեռնափոխադրումը համաձայնեցնում է համայնքային ոստիկանության հետ, որը տրամադրում է անցագիր՝ տրանսպորտի ոլորտի թվային ծառայությունների հարթակի (transport.e-gov.am) միջոցով՝ էլեկտրոնային տարբերակով:»,

ժգ. 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. Համայնքային ոստիկանության կողմից էլեկտրոնային թույլտվության անցագրի հատվածում լրացվում են «Փոխադրման ժամեր», «Երթևեկության առավելագույն արագություն», «Կամուրջներով և ուղեանցներով առավելագույն արագություն», «Սահմանափակումներ եղանակային պայմաններից», «Ուղեկցում», «Կապի ձև», «Երթևեկության ժամանակավոր կամ օպերատիվ փոփոխություն» դաշտերը:»,

ժդ. 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17. Տրամադրված թույլտվությունը պարունակում է արագ արձագանքման ծածկագիր (QR կոդ) և 16 նիշանոց հսկիչ համար (tracking number): Բեռնափոխադրման թույլտվության և անցագրի վավերականությունը փոխադրումների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից կարող է իրականացվել հսկիչ համարը պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգման պաշտոնական կայք (http://verify.e-gov.am) մուտքագրելու կամ արագ արձագանքման ծածկագրի միջոցով:»,

ժե. 18-րդ կետը «ընթացքում» բառից հետո լրացնել «տրանսպորտի ոլորտի թվային ծառայությունների հարթակի (transport.e-gov.am) միջոցով» բառերով,

ժզ. NN 1, 3 և 5 ձևերը հանել,

ժէ. N 2 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ձև N 2

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ ԾԱՆՐԱՔԱՇ, ՉՄԱՍՆԱՏՎՈՂ ԵՎ/ԿԱՄ ՄԵԾ ԵԶՐԱՉԱՓԵՐՈՎ ԲԵՌԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ FOR HEAVYWEIGHT, INDIVISIBLE AND/OR WIDE FREIGHT TRANSPORTATION THROUGH COMMON USE AUTOMOBILE ROADS OF RA				
	ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ PERMISSION				
Թույլտվություն N Permission N	Ամսաթիվ՝ __.__.____թ. Date: __.__._____				
Փոխադրման տեսակը Type of transportation					
Թույլտվության տեսակը Type of permit			Երթերի քանակը Quantity		
Թույլատրված է կատարել Perform march	Սկսած From		Մինչև To		Ժամանակահատվածում Period of time
Երթուղի Route					
Բեռնափոխադրողի մասին տվյալները Freight carrier information					
Բեռը փոխադրողի անվանումը Name of freight carrier					
Գտնվելու վայրը Location			Հեռախոսահամարը Telephone		
Բեռի նկարագրությունը Freight description					
Բեռի անվանումը Freight name					
Բեռի եզրաչափերը Freight dimension			Բեռի զանգվածը Freight mass		
Բեռը փոխադրող ավտոտրանսպորտային միջոցի տվյալները Freight transportation vehicle information					
Քարշակի մակնիշը (տիպը) Model (type) of truck					
Հաշվառման համարանիշները Registration plate					
Կցորդի (կիսակցորդի) մակնիշը Model (type) of trailer					
Հաշվառման համարանիշները Registration plate					
Տրանսպորտային միջոցի հարաչափերը Parameter of means of transport					
Ընդհանուր զանգվածը (բեռով) (տոննա) Total mass (freight) (ton)			Այդ թվում՝ քարշակի զանգվածը (տոննա) Including truck weight (ton)		
Սռնիների միջև հեռավորությունը (մետր) The distance between the axles (meters)	1-2 - _, 2-3- _, 3-4- _, 4-5- _, 5-6- _, 6-7- _, 7-8- _, 8-9- _, 9-10- _, 10-11- _, 11-12- _				
Սռնիների բեռնվածությունը (տոննա) The workload of axles (ton)	1- _, 2- _, 3- _, 4- _, 5- _, 6- _, 7- _, 8- _, 9- _, 10- _, 11- _, 12- _				
Եզրաչափերը Dimensions					
Երկարությունը (մետր) Length (meters)		Լայնությունը (մետր) Width (meters)		Բարձրությունը (մետր) Height (meters)	
Պաշտպանական տրանսպորտային միջոցով ուղեկցում Type of guardian escort					
Ավտոմեքենայի մակնիշը, մոդելը Model of automobile					
Հաշվառման համարանիշը Registration plate					
Բեռն ուղեկցող անձը Freight accompanying person		Անուն Name		Ազգանուն Surname	
Երթևեկության հատուկ պայմանները Special traffic conditions					
Թույլտվությունը տրված է Permission is given by	**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից**			**Նախարարի տեղակալ՝**	
ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության կողմից տրամադրված անցագիր Permit provided by the Community Policing of the Police of the Ministry of Internal Affairs of the RA					
Փոխադրման ժամեր Hours of transportation					
Երթևեկության առավելագույն արագություն Maximum velocity of transportation			Կամուրջներով և ուղեանցներով առավելագույն արագություն Maximum velocity on bridges and overpasses		
Սահմանափակումներ եղանակային պայմաններից Weather constraints					
ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության պարեկային տրանսպորտային միջոցով ուղեկցում Escort by the Community Policing patrol vehicle of the Ministry of Internal Affairs of the RA					
Ուղեկցում Escort					
Կապի ձև Communication channel					
Երթևեկության ժամանակավոր կամ օպերատիվ փոփոխություն Temporary or operational change of traffic					
Փոխադրումը համաձայնեցնող ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայող՝ ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ՃԵՀՄԿ բաժնի պետ					
Հեռախոսահամարը Telephone					
QR կոդ	Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):				

»,

ժը. N 4 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ձև N 4

ԾԱՆՐԱՔԱՇ, ՉՄԱՄՆԱՏՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՄԵԾ ԵԶՐԱՉԱՓԵՐՈՎ
ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

1.	Թույլտվության համար	
2.	Թույլտվության ամսաթիվ	
3.	Բեռնափոխադրողի անվանումը	
4.	Բեռնափոխադրողի հասցեն	
5.	Փոխադրման ժամանակահատված	
6.	Երթի տեսակ	
7.	Երթի սկզբնակետ, վերջնակետ և երթուղի	
8.	Բեռի ցուցանիշներ	
9.	Քարշակի մակնիշ/մոդել և համարանիշ	
10.	Կցորդի (կցորդների) քանակ, մակնիշ/մոդել և համարանիշ	
11.	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով փոխադրման իրականացման մեկանգամյա երթուղու թույլտվություն տալու համար պետական տուրք	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ